ՎԻԿԻՊԵԴԻԱՆ ՈՐՊԵՍ ԹՎԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄՈԴԵԼ

ԱՍՏՂԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Հայաստանի ազգային գրադարանի մատենագիտության և գիտական
հետազոտությունների ենթաբաժնի վարիչ

Գրադարանները և գրադարանավարները երկար ժամանակ եղել են և կան գիտելիքի ու տեղեկատվության տարածողներն ամբողջ աշխարհում: Համացանցի զարգացմանը զուգահեռ առցանց ռեսուրսները դարձել են լրացուցիչ գրադարանային ծանոթագրությունների աղբյուրներ: Գրադարաններն առաջիններից էին, որ իրենց գործունեության մեջ ինտեգրեցին թվային ռեսուրսներ և ծառայություններ: Որպես գիտական կենտրոններ՝ նրանք շարունկում են զարգանալ այդ ոլորտում՝ ստեղծելով ամբողջական թվային համակարգ՝թվային գրադարան:

Թվային գրադարանի հիմնական ուղղություններն են՝

- Մշակել տվյալներ
- Դարձնել տեղեկատվությունը օգտակար
- Տրամադրել ինֆորմացիան ընթերցողներին

Նպատակն է՝ դառնալ լայնածավալ, դասակարգված գիտության կենտրոն՝ տեղադրելով ճշգրիտ տեղեկատվություն առանց ժամանակի կամ տարածության սահմանափակումների:

Հաջորդ կարևոր խնդիրը թվային գրադարանի համար՝ գիտությունն իր բազմաթիվ ճյուղերով դարձնել արդյունավետ և մատչելի ուսումնասիրող հասարակությանը: Հմուտ գրադարանավարների և ուսուցիչների օգնությամբ անհատ անձիք կարող են ձեռք բերել տեղեկատվական գրագիտություն և, անհրաժեշտության դեպքում, արդյունավետ ընտրել և օգտագործել առցանց ռեսուրսները:

Կան բազմաթիվ առցանց աղբյուրներ, որոնք չեզոք են, ազատ, ունեն բաց մատչելիություն և որոնց մասին հանրությունը իրազեկվում է գրադարանների միջոցով: Ամենամեծ ծրագիրը Վիքիպեդիան է:

Վիքիպեդիան ազատ-էլեկտրոնային հանրագիտարան է, որ գրվում է համատեղ այն օգտագործող մարդկանց կողմից: Այն հատուկ տիպի վեբ-կայք է, որը ստեղծված է համատեղ աշխատանքը հեշտացնելու նպատակով և կոչվում է վիկի: Վիկի տեխնալոգիաները այսօր համարվում են ամենավառ հետազոտական դոմեյնը: Մեծ թվով մարդիկ անընդհատ կատարելագործում են Վիքիպեդիան՝ կատարելով ժամում հազարավոր փոփոխություններ: Յուրաքանչյուր ոք կարող է խմբագրել, և նրանք խրախուսում են խիզախությունը:

Վիքիպեդիան և գրադարանները միմյանց կապվում են հետազոտության և տարածման օղակով: Եթե նախկինում շատ գրադարանավարներ զգուշացնում էին ընթերցողներին խուսափել կամ զգուշանալ Վիքիպեդիայից հօգուտ գրադարանների բազաների և երկրորդական աղբյուրների, ապա այժմ նրանք համախմբվում են միևնույն նպատակի շուրջ՝ ստեղծել ինֆորմացիա և այն սպասարկել երկու վեբկայքերի միջոցով: Գերծանրաբեռնված տեղեկատվական աշխարհում գրադարանավարները ունեն այնպիսի հետազոտական փորձագիտություն և մասնագիտական գիտելիքներ, տիպական կիրառելի աշխատելաոճ, ինչպիսիք հարկավոր են Վիկքպեդիա ծրագրերին: Եթե Վիկիպեդիան վիրտուալ առցանց դուռ է դեպի գիտելիքի աշխարհ, ապա գրադարանը հանդես է գալիս որպես իրական դուռ: Այս երկու համակարգերի միասնական աշխատանքի արդյունքում մարդկության համար կստեղծվեն տեղեկատվության մատչելիության նոր մակարդակներ: Գրադարանային համայնքը համագործակցում է Վիքիպեդիայի հետ՝որպես

- ուսուցման գործիք
- գիտելիքի տարածման միջոց
- էկոհամակարգի ինտերնետ հետազոտման կենտրոնական մաս

Գաղափարը զարգացնելու նպատակով կարելի է կիրառել հետևյալ ռազմավարությունները՝

1. Ապահովել գրադարանավարներին ինֆորմացիայով, թե ինչպես ինտեգրել Վիքիպեդիան գրադարանի առօրյա աշխատանքում
2. Կիսել Վիքիմեդիա շարժման փիլիսոփայությունը գրադարանավարների հետ
3. Խրախուսել մշակութային հաստատություններին՝ մասնակցել բաց մատչելիության ինֆորմացիայի ստեղծմանը
4. Խրախուսել թվային գրագիտություն ընթերցողների միջև

5. Նպաստել տեղական բովանդակության տարածմանը, որոնք առնչություն ունեն տարածաշրջանի և գրադարանի հատուկ գիտելիքի հետ
6. Սովորեցնել գրադարանավարներին և հասարակությանը հեղինակային իրավունքից օգտվելու պայմանները և ծանոթացնել Ստեղծագործական ընդհանուր լիցենզավորմանը

Գաղափարը ինտեգրել Վիկին թվային գրադարանին տալիս է նաև հնարավորություն՝ բարելավելու տեղեկատվական որոնման և սպասարկման որակը թվային գրադարանում: Թվային գրադարաններում չկա համակարգի և օգտատերի, օգտատերի և մենեջերի, օգտատերի և օգտատերի միջև փոխազդեցություն, ինչն էլ հանգեցնում է տեղեկատվության որոնման ցածր որակի: Ավանդական թվային գրադարանում փնտրման արդյուքները տեսակավորված են պարզապես ըստ ժամանակի և հեղինակների: Օգտվողները ստիպված են ծախսել ավելի շատ ժամանակ իրենց ցանկացած ինֆորմացիան գտնելու համար: Թվային գրադարանի առանցքային կետն է ապահովել արժեքավոր ինֆորմացիա կարճ ժամանակում: Վիկի տեխնոլոգիաների նախագծած մեթոդը հաջողությամբ է իրականացվում գրականության որոնողական համակարգում: Տեղեկատվական որոնողական մոդելի ինդեքսների էվոլուցիան ներառում է ***հետկանչ և ճշգրտություն***: Համակարգում կան երեք շերտեր՝

1. Հայտի կամ դիմումի շերտ
2. Սպասարկման շերտ
3. Բազային շերտ

ՎԻԿԻՊԵԴԻԱ-ԳՐԱԴԱՐԱՆ-ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սրանք այն կարևոր գործառույթներն են, որոնք իրականում շրջապտույտ են կատարում: Գոյություն ունեն մի քանի Վիկի նախագծեր, որոնք փորձում են ընդլայնել գրադարանների հետ համատեղ աշխատանքը: Առանձնացնենք Վիքիպեդիա գրադարանը: Շրջապտույտի արդյուքնում ձևավորված կենտրոն է, որը համաշխարհային կառույցները անվանում են **Վիքիպեդիա գրադարան՝** բաց հետազոտությունների հանգույց: Այն ունակ է բարելավել աշխարհի ամենամեծ հանրագիտարանը և կապել ընթերցողներին գրադարանների և հավաստի աղբյուրների հետ:

Վիքիպեդիա գրադարանը աշխատում է հանուն 5 նպատակների՝

- Կապել խմբագիրներին իրենց տեղական գրադարանի և բաց մատչելիության ռեսուրսների հետ
- Գործընկերոջը ապահովել ազատ մուտք դեպի հեղինակային իրավունք ձեռք բերած հրատարակություններ, տվյալների բազաներ, համալսարաններ և գրադարաններ
- Ստեղծել փոխհարաբերություններ խմբագիրների, գրադարանների և գրադարանավարների միջև
- Հեշտացնել հետազոտությունը Վիքիպեդիայից օգտվողների համար, օգնել խմբագիրներին գտնել և օգտագործել աղբյուրները
- Խթանել առավել լայն բաց հասանելիություն դեպի տպագրված գրքերը:

Վիքիպեդիա գրադարանը փնտրում է ավելի հավակնոտ ուղիներ՝ կապելու գրադարանը և Վիքիպեդիան: Դրանք են՝

- Միանալ բոլոր համալսարաններին և կապել Վիքիպեդիա գրադարանը իրենց գրադարանի ռեսուրսների հետ
- Ինտեգրել կատալոգները, տվյալների բազաները, արխիվները և ամսագրերը
- Ներգրավել տեղեկատվական գիտալիքներով օժտված գրադարանավարներին՝ պատասխանելով Վիքիպեդիայի խմբագիրների հարցումներին
- Ապահովել ուղիները, որոնք օգտվողներին կկապեն գրադարանավարների հետ Վիքիպեդիայի միջոցով
- Խրախուսել գրադարաններին կազմակերպելու պրոֆերսորադասախոսական ուսուցում Վիկիպեդիայի և թվային գիտության վերաբերյալ
- Օգտագործել գրաֆիկներ՝ ազդարարելու աղբյուրների ազատ հասանելության մասին
- Տրամադրել կենտրոն օգնություն և ուսումնասիրող ուղեցույցներ գտնելու համար և հնարավորություն տալ նրանց լինել ազատ
- համադրել մետատվյալները Վիքիպեդիայի հոդվածների հետ

Վիքիպեդիան սիրում է գրադարաններին - շարունակական քարոզարշավ է ներկայացնելու գրադարանավարներին և Վիքիպեդիստներին, ովքեր ցանկանում են համագործակցել:

«Վիքիպեդիան սիրում է գրադարններին» մոդելի առավելությունն է՝

- Հեշտ կազմակերպել, նույնիսկ փոքր հանրային գրադարաններում

- Ողջունել բոլորին, Վիքիպեդիստներին, գրադարանավարներին և գրադարանի ընթերցողներին
- Սա կենդանի հղման բաժին է
- Բացի այդ, դա հաճելի է

Գրադարանավարները խմբագրում են Վիկիպեդիան՝ կատարելով 5 գործառույթ՝

1. **Գրել:** Վիկիպեդիան երբեք չի ավարտվում և GLAM (Պատկերասրահներ, գրադարաններ, արխիվներ, թանգարաններ) բովանդակությունը բացառություն չէ: Հոդվածների մի մասը արդեն գոյություն ունի և հարկավոր է բարելավել, մինչ մյուս թեմաները պետք է ստեղծել զրոյից:

2. **Թարգմանել**: Գրադարանի ընթերցողներն իրենց նախընտրելի շատ նյութեր կարող են ընթերցել միայն մեկ լեզվով, հաճախ՝ անգլերեն: Նախընտրելի է, որ ընթերցողները կարողանան մուտք գործել դեպի ինֆորմացիա և կատարել թարգմանություն: Եթե կան հոդվածներ, ասենք միայն չինարենով և ընթերցողը տիրապետում է այդ լեզվին հիանալի, ապա ինչու չփորձել թարգմանել այն:

3. **Ներբեռնել:** Ոչ մի Վիքիմեդիա հոդված իրականում ամբողջական չէ պատկերների և այլ լրատվամիջոցների բացակայության դեպքում: Կիսվիր քո հավաքածուում տեղ գտած հին գործերի լուսանկարներով, որոնք երբեք բարձր որակ չեն ունեցել:

4. **Տարածել:** Խոշոր հաստատությունները հաճախ ներբեռնում են հազարավոր մեդիա ֆայլեր, որոնց պարունակությունը ընթերցողը իրականում չի տեսնում: Ներբեռնված ֆայլերը պետք է օտվողին հնարավորություն ընձեռեն արդյունավետ օգտագործել:

5. **Վերծանել:** Երբ հին փաստաթղթերը թվայնացվում են, միշտ չէ հնարավոր նրանց բովանդակությունը վերծանել ավտոմատ կերպով: Եթե դու ունես լավ տեսողություն, փորձիր վերծանել այս փաստատթղթերը վիքիաղբյուրում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Վիկիպեդիան և հանրային գրադարանները սկսել են համագործակցել 2010 թվականից և շարունակվում է ընդլայնվել:

Հայաստանի ազգային գրադարանը և Վիքիմեդիա Հայասատն Գիտակրթական ՀԿ-ի միջև համաձայնագիր է ստորագրվել 2014 թ.:

Հուշագրի համագործակցության գլխավոր նպատակն է ՝

- Վիկի տեխնալոգիաների նորարական մեթոդների կիրառումը գրադարանում
- Գրադարանի հարուստ ռեսուրսների ազատ օգտագործումը Վիկի խմբագիրների կողմից

Գրադարան և Վիքիպեդիա համաձայնության արդյունքում կատարվում են շարունակական աշխատանքներ՝ գրել, թարգմանել, ներբեռնել, տարածել, վերծանել գործառույթները կատարելով: Ազատ խմբագրի միջոցով մուտքագրվում են աղբյուրներ: Համագործակցության շնորհիվ կատարվում են աշխատանքներ թվայնացված գրքերի հետ: Վիքիպեդիայի աշխատակիցները յուրաքանչյուր թվայնացված գրքի օրինակ թվային տարբերակով ուղարկում են Ազգային գրադարան: Այտեղ գիրքը տեղադրվում է «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում Վիքիպեդիայի հղմամբ: Համագործակցության արդյունքում տեղադրվել է 45 գիրք, 11058 թվայնացված էջ: Դրանցից տասը Սովետական հանրագիտարանի հատորներն են: Մյուսները տարբեր տարեթվերի հրատարակություններ են: Ազգային գրադարանը հնարավորություն է ընձեռում ընթերցողին գրքերից օգտվել առցանց:

Դրանք են՝

Ծանոթագրությունների բաժնում որպես աղբյուր ավելացել է 79-ը: Հուսով ենք մեր համագործակցությունը կլինի շարունակական և կընդգրկի ավելի լայն շրջանակներ: Արդյունքում կկարողանանք ստեղծել Վիքիպեդիա գրադարան:

Ե՛վ Վիքիպեդիան, և՛ գրադարանները միևնույն գործընթացում են: Երկու հաստատություններն էլ ցանկանում են ընթերցողին, հասարակության տարբեր խավերին մատակարարել հնարավորինս շատ անվճար ու մատչելի տեղեկատվություն: Գրադարանները պարունակում են գիտելիքի հսկայական պաշարներ, իսկ Վիքիպեդիան կարող է ոչ միայն ավելացնել բարձր որակի բովանդակությամբ Ծանոթագրություններ, այլև ընթերցողներին ուղորդել դեպի գրադարան՝ ուսումնա-

սիրելու իրենց հավաքածուները և աղբյուրները՝ ավելացնելով գրադարանի նյութերի օգտագործումը: Վիքիպեդիան թվային գրադարան չէ, այն չունի այն կարևոր հատկանիշները, որոնք անհրաժեշտ են թվային գրադարանի ընթերցողներին: Վիքիպեդիան թույլ է տալիս խմբագրել գրառումները: Թվային գրադարանները ա-ջակցում են տեղեկատվության բարելավվմանը յուրաքանչյուր ընթերցողի կամ ընթերցողների խմբի հետաքրքրության բավարամամբ: Գրադարանավարները համոզ-ված են, որ իրենք խողովակաշարի մի մասն են և Վիքիպեդիայի Ծանոթագրություն բաժնում տեղ գտած աղբյուրները ընթերցողին կբերեն գրադարան՝ դեպի ամբող-ջական տեքստ: